Մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Ծովասարի Բ. Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում ֆիզկուլտուրայի (16 դասաժամ), կենսաբանության (6 դասաժամ), տեխնոլոգիայի (7 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարությանկողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին կարող է մասնակցել հաստատության տվյալ թափուր տեղին ներկայացվող՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող անձը:

Մրցույթին մասնակցողը ներկայացնում է՝

1. Դիմում (ձև 1),
2. Բարձրագույն կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),
3. Անձնագիր,
4. Աշխատանքային գրքույկ,
5. Ինքնակենսագրություն (Ձև 4),
6. Մեկ լուսանկար 3Х4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
8. Հայաստանի Հանրապետությունում արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ,
9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)
10. Որակավորման տարակարգ (առկայության դեպքում):

Փաստաղթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ 2024 թվականի հունվարի 29-ից մինչև 2024 թվականի փետրվարի 9-ը ներառյալ, ամենօր՝ ժամը 10:00-ից 17:00,բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2024 թվականի փետրվարի 16-ին ՝ժամը 14:00-ին Ծովասարի Բ. Մուրադյանի անվան միջնակարգ դպրոցում:

Հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Ծովասար, 1-ին փողոց, 13 շենք:
Տեղեկությունների համար զանգահարել 094094029 հեռախոսահամարով: